

որ պահեց Հին Հայաստանն Ցայց աշխարհի և Պոնտոսի լեռնաշղթաներու վըրայ՝ Խաղաղից, որ այժմ Լազիստան է կոչուում:

Եզրափակելով վերեւ գրածնիս կը յօժարինք յայտարարել որ Հայաստանի երկու հզօր դրացի ազգեր, իրենց ամենայն գերիշխանութեամբ բնաւ ազգեցութիւն չեն ունեցած Հայաստանի ճակատացի վրայ, ընդհակառակն օգտուել են Հեթեաններու քարագործներէն և Հին Հայոց Վանեան գրերէն և ճարաւարապետութենէն, եթէ կարելի է այսպէս ասել: Բնաւ տարօրինակ գաղափար չեմ կարծեր որ Բուլի մեր յայտնած միտցն թէ մինչեւ ցարդ Նինուէի, Բարելոնի, Փերսեպոլոս և Շօջի եւայլն պեղումներէն դուրս ելած զարմացուցիչ աւերակներն իրենց բոլոր քանդակներով, օտար քաղաքարթութեան բեկորներ են, և ոչ տեղական մշակոյր: Խոչ որ ժամանակից ազգեր գործած են և կը գործեն, նոյնը արած են Ասորեստան և Մարտաստան Հոռմի Պանթէոնը արեւելցիններ շիներ են ոչ Հառմայեցի ճարաւարապետներ, Յրայանոսի գեղեցկազոյն Ֆորումն (Հարաբարակը) Դամասկացի Ապոլլոնորուն ճարտարապետը շինած է, նոյնպէս Դաննուրի Վրայի առաջին բարէ կամուրշի. Պետրորդաղի Կազանսկի, Իսակովսկի Ենեղեցից շինած են Խոտալացի ճարտարապետներ, Նոյնիսկ Մորանասյի ամենածագկեալ զարուն Պարիզու մէջ Կերստեր են Խոտալ ճարտարապետներ ապարանցներ և եկեղեցներ զոր օրինակ Ս. Սիլվափիս ենք. Թողունց աւելի հեռաւոր երկիրները և երկու կը մերի կամքաները: Դիցուք թէ մեզնէ չորս հազար տարիներ յառաջ պատահած լինէին այս դէպքեր, չպիտի վերապրուէր տեղական կորուսայի և աեղացի ճարտարապետի: Այնուհանդեռծ որ անոնց նմաններն և անոնց շարունակութիւնն հետեւեալ զարերուն կը տեսնուին և իրաւունք կու տան այս ենթագրութեան. իսկ Միջազիքը մայրաքաղաքներունը անհատականի գործեր են, որը իրենց կենդանութեան ժամանակ երեւցեր են և յետոյ

անոնց անցմանէ յետոյ շարունակութիւն չեն ունեցած: Կոնկորտի հրապարակի հրապտական սպելիսկը Սեսուտրիսի ժամանակէն այսօր կը մնայ յուշարձան մը Մեծին Նապոլէոնի:

Գեղարուեստ և գրականութիւն կամ գեղեցիկ զպրութիւն համընթաց քայլով յառաջացեր և զարդացեր են ազգերու կեանքի մէջ. ուստի երր Հայ Արշակունի թագւորներ զուլիս անցած են աշխարհաշիթեան և գրականութեան, նորա տարած են Հայ ժողովուրդը զարգացման և յառաջադիմութեան ճանապարհով դէպ դէպ ի բարձրագոյն գաղափարական նպատակը:

(շարումակելի)

Հ. Գ. ԿԱԱԱՊԵՏԱՆԱՆ

## ՖՅՈՒ Ի ԼՈՅԾ

Գեն կը ճախրեմ, պարզած խոյանքը մոքիս դէպ ի աստղերն Անհունին.

Գեն կը ճախրեմ, բանտած հոգւոյս մէջ խոնուե կարմիր կայծերն հանճարին:

Լոյս կ'ուզեմ, լոյս, մըր է աղբիւրը լոյսին,

— Ասուզեր կ'ուզեմ համբուրել —

Այդ համբոյքն կ'ուզեմ որ լոյսը բընի,

Ցեսոյ ըմպէլ, երազել:

Լոյսին կ'երթամ, անհունացած է հոգիս, իր տեսիթէն ծաղկասի.

Հասած եմ արդ միջն կատարն երազիս, Աւր ինձ Աստուած կը խօսի:

Ասուզերն վեր, Անմահին դէմ եմ արդէն,

— Ան աղբիւրը կեանքին. —

Սեղմած ուժգին բորբ երակէն ասմազուն՝

կը քամում շիթը լոյսին:

Վիշին ՄՐԱՊԵՏԱՆ